ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 20

«17» ապրիլի 2019 թվական գյուղ Մայիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՊՍ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ «ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ» ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 1708-ն որոշման 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով հաստատված կարգերի դրույթներով Մարմաշեն համայնքի ավագանին

ո ր ո շ ու մ է

1.Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված «Մանկապարտեզի վերակառուցում» (այսուհետ՝ ծրագիր) սուբվենցիայի հայտին՝ համաձայն հավելվածի:

2Սահմանել որ՝

1)ծրագրի արժեքը կազմում է 10886945 (տաս միլիոն ութ հարյուր ութսունվեց հազար ինը հարյուր քառասունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ, որից 5000000 (հինգ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ համաֆինանսավորման տեսքով ներդնում է համայնքը՝ Մարմաշեն համայնքի 2019 թվականի բյուջեի 6/1/1 գործառնական դասակարգման (5113) «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տնտեսական դասակարգման հոդվածից,

2)ծրագրի իրականացման հետ առնչվող այլ փաստաթղթերի ստորագրումը, դրանցից բխող գործառույթների կազմակերպումն իրականացնում է Մարմաշեն համայնքի ղեկավարը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝	*Դեմ՝*	*Չեռնպահ՝*
ՄԱՆՈՒԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ՝	v		
ՌՈՒՍՏԱՄ ԱՌԱՔԵԼՅԱՆ՝	v		
ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ՝	v		
ԱՐՏՅՈՄ ԶԱՔԱՐՅԱՆ՝	v		
ՍԼԱՎԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ՝	v		
ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ՝	v		
ԿԱՄՈ ՂԱՆԴԻԼՅԱՆ՝	v		
ՋԱՆԻԲԵԿ ՂԱՖԱՐՅԱՆ՝	v		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԱՐՇԱԿՅԱՆ

«17» ապրիլի 2019 թվական

գյուղ Մայիսյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Մարմաշեն համայնքի ավագանու
2019 թվականի ապրիլի 17-ի թիվ 20 որոշման

Հ Ա Յ Տ

Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների

Ծրագրի անվանումը	Մանկապարտեզի վերակառուցում:
Մարզ	Շիրակի մարզ:
Համայնքը /համայնք-ները	Մարմաշեն համայնք,Կապս բնակավայր:
Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից	Երևանից - 131 կմ, Մարզկենտրոնից - 14 կմ
Համայնքի /բնակավայրի բնակչությունը	2019 թվականի հունվարի դրությամբ կազմում է 764 մարդ
Սահմանամերձ, բարձր լեռնային համայնք /բնա-կավայրի	Համայնքը չի հանդիսանում սահմանամերձ կամ բարձր լեռնային համայնք :
Համայնքի բնակավայրի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիճ տեղեկատվություն	Կապս բնակավայրում ջրամատակարարումը և ջրահեռացումը սպասարկվում է <<ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ>> ՓԲԸ կողմից:Բնակավայրը գրեթե ամբողջությամբ գազաֆիկացված և էլեկտրաֆիկացված է: 2018 թվականի ընթացքում բարելավվել է փողոցային լուսավորության վիճակը՝ հասցնելով մոտ 70 տոկոսի: Վատթար վիճակում են գտնվում ներբնակավայրային ճանապարհները՝ ամբողջությամբ մոտ 9 կմ:
Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը	Դպրոցում սովորում են 62 աշակերտներ, իսկ 1-5 տարեկան երեխաների թիվը կազմում է 42 երեխա: Կապս բնակավայրը չունի մանկապարտեզ, երեխաների գերակշիռ մասը նախադպրոցական կրթություն չեն ստանում: Մանկապարտեզ հաճախելը շատ կարևոր է յուրաքանչյուր փոքրիկի դաստիարակության համար: *Անհրաժեշտ է կատարելագործել նախադպրոցական կրթության ոլորտը և ապահովել մատչելիություն հատկապես սոցիալապես անապահով ընտանիքների համար :*
Ծրագրի ակնկալվող	Մանկապարտեզի շենքի հիմնանորոգումից ակնկալվող արդյունքները

արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին	հետևյալն են. Նախադպրոցական որակյալ կրթություն: Մարդկային շփման առաջին փորձը երեխաները ստանում են ընտանիքում, բայց հասարակությանը ինտեգրվելու առաջին մեծ փուլը երեխայի համար հանդիսանում է մանկապարտեզը:Մանկապարտեզի առօրյան, ի տարբերություն ընտանեկան միջավայրի, հնարավորություն է տալիս երեխաներին շփվել իր հասակակիցների հետ, կրթվել և դաստիարակվել իր տարիքին համապատասխան ծրագրերով և մեթոդներով, սովորել և ընտելանալ սիստեմատիկ գրաֆիկին, դառնալ ավելի ինքնուրույն: Մանկապարտեզը նախատեսված կլինի 25 ից- 30 երեխայի համար:Կլինեն խմբային, ննջարանային սենյակներ, սանհանգույց և հանդերձարան, խոհանոց, լվացքատուն և պահոցներ, տնօրենի աշխատասենյակ, մարմնամարզության և խաղերի դահլիճ: Ծրագրի շրջանակներում կբարեկարգվի նաև շրջակա տարածքը:
Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները	.Կազմել մանկապարտեզի շենքի հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը, • Կազմակերպել օրենքով սահմանված կարգով մրցույթ: • Արդյունքների ամփոփում, պայմանագրի կնքում: • Ապահովել ֆինանսական ներդրման համաֆինանսավորում: Հետևել ընտրված շինարարաի կատարվող աշխատանքների որակին և ծրագրի վերջնական արդյունքին:
Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում	Ծրագրի իրականացման արդյունքում հիմնանորոգվող մանկապարտեզի շենքը և գույքը կլինեն Մարմաշեն համայնքի սեփականությունը: Ծրագրով նախատեսվող ծախսերը կապիտալ բնույթի են: Ծրագրի ավարտից հետո համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցները՝ (Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Մարմաշեն բնակավայրի մանկապարտեզի շենքը) կավելանան ևս մեկով, որն էլ կբերի հիմնական միջոցների արժեքի ավելացման:
Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա	Ծրագրի շահառուներն են Մարմաշեն համայնքի Կապս բնակավայրի ամբողջ բնակչությունը / 764 մարդ/:Գյումրի քաղաքի և հարակից համայնքների մանկապարտեզներ հաճախող երեխաների ընտանիքները կունենան խնայողության հնարավորություն մատչելի վարձավճարների և տրանսպորտային ծախսերի կրճատման մասով: Արտադպրոցական խմբակների գործունեությունը կնպաստի բնակավայրում մշակութային կյանքի ակտիվացմանը /երգի, պարի և նկարչության խմբակների ակտիվ գործունեությունը/:
Ծրագրի իրականացման ընթացքում և արդյունքում ստեղծվող աշխատատեղեր	Ծրագրի իրականացման (շինարարության) ընթացքում կստեղծվեն թվով 5 – ից 10 ժամանակավոր աշխատատեղեր: Համայնքապետարանի կողմից նախատեսված մանկապարտեզի բացման դեպքում կստեղծվեն առնվազն 10 նոր հիմնական աշխատատեղեր: .տնօրեն-1

.մեթոդիստ,ուսումնական գծով տնօրենի տեղակալ-1
.բուժքույր-1
.հաշվապահ-1
.դաստիրակ-1
.խոհարար-1
.տնտեսվար-1
.երաժշտության մասնագետ-1
.պահակ-1
.հավաքարար-1

Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը

314 756. 3 /հազ.դրամ/

	Պլանը /հազ.դրամ/	Փաստացին /հազ.դրամ/	Տոկոսը %
Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտները այդ թվում՝՝	314 756.3	288 150.5	91.5
- Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝	314 756.3	288 150.5	91.5
- Սեփական եկամուտներ	104 662.8	78 058.0	74.5
- Ֆոնդային բյուջեի եկամուտներ	----	-----	---
Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, որից՝	340 184.5	238 554.3	70.1
- Վարչական բյուջեի ծախսեր	316 319.0	227 902.9	72.0
-Ֆոնդային բյուջեի ծախսեր	63 865.5	14 809.1	23.1
Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը, որից՝	63 865.5	14 809.1	23.1
- Շենք շինությունների կառուցում	2 865.5	---	0
- Շենք շինությունների վերանորոգում	30 000.0	---	0
- Վարչական սարքավորումների ձեռքբերում	7 000.0	3 730.8	53.2
- Այլ մեքենասարքավորումների ձեռքբերում	19 000.0	8 346.3	43.9
-Նախագծահետազոտական ծախսեր	5 000.0	2 732.0	54.6
-			

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն

372 303.0 /հազ.դրամ/

	Պլանը /հազ.դրամ/

Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում այդ թվում՝՝	372 303.0
- Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝	372 303.0
- սեփական եկամուտներ	130 599.1
- Ֆոնդային բյուջեի եկամուտներ	40 000.0
Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, որից՝	447 327.4
- Վարչական բյուջեի ծախսեր	372 303.0
-Ֆոնդային բյուջեի ծախսեր	75 024.4
Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը, որից՝	75 024.4
- Շենք շինությունների կապիտալ վերանորոգում	18 024.4
- Տրանսպորտային սարքավորումների ձեռքբերում	42 000.0
- Վարչական սարքավորումների ձեռքբերում	3 000.0
-Այլ մեքենաների և սարքավորումների ձեռքբերում	9 000.0
-Նախագծահետազոտական ծախսեր	3 000.0

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կան-խատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով	Համայնքի 2019թ.-ի բյուջեով հնարավոր չէ, քանի որ 447 327.4 հազ. ՀՀ դրամից հատկացվելու է. - Թվով 3 ՀՈԱԿ-ներինի - 24915.4 հազ. ՀՀ դրամը - Համայնքապետարանի աշխատակազմի աշխատավարձի և պահպանման ծախսեր – 147 100.0 ՀՀ դրամ - Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների համար – 13 500.0 ՀՀ դրամ - Սոցիալական պաշտպանության ծրագրերի համար – 11 000.0 ՀՀ դրամ - Պահուստֆոնդ – 68 087.6 ՀՀ դրամ - Ճանապարհային տրանսպորտ – 38 000.0 ՀՀ դրամ - Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ, որից նախատեսում ենք համայնքի մասնակցությունը համապատասխան ծրագրին սուբվենցիա տրամադրելու համար – 118 724.4 ՀՀ դրամ - Գյուղատնտեսություն – 7 000.0 ՀՀ դրամ - Աղբահանություն – 15 000.0 - Հանգիստ և մշակույթ – 4 000.0
Ծրագրի ընդհանուր բյուջեն	10 886 945 ՀՀ դրամ (100%)
Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը	5 000 000 ՀՀ դրամ (45,9%)

Այլ ներդրողներ	0 դրամ (0 %)
Ծրագրի իրականացման տևողությունը	Սկիզբը մայիս 2019թ. Տևողությունը 6 ամիս
Ծրագրի ծախսերը	Ծրագրի իրականացման համար նախատեսվել է ծախսել 10 886 945 մլն ՀՀ դրամ , որի համար հիմք հանդիսացող նախագծանախահաշվային փաստաթղթերը կից ներկայացվում են:
Ամսաթիվ	20 փետրվար 2019թ.

Այլ տեղեկություններ ծրագրի մասին (Հարկ եմ համարում նշել, որ մանկապարտեզի կառուցումը բնակավայրի համար անհրաժեշտություն է,: Գյուղի սոցիալապես քիչ թե շատ ապահովված ընտանիքների երեխաները հաճախում են Գյումրիի և հարևան գյուղերի մանկապարտեզներ):

Համայնքի տնտեսական պատասխանատու **Արտաշես Դրմեյան**

Հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստը

098799775 marmashen.shirak@mta.gov.am

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԿԱՐԵՆ ԱՐՇԱԿՅԱՆ**